այցելելու իրավերի, ինչպես նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր կյանքին եւ գործունեությանը ծանոթանալու հնարավորության ընձեռման համար: Լազար Սրբազանը ներկայացրեց Խորհրդի անդամների տպավորությունները այցից, ապա ընթերցվեց Էստոնիայի Եկեղեցիների խորհրդի նախագահ Իներսոնա արքեպիսկոպոսի ուղերձը:

Այնուհետեւ պատվիրակության անդամներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով խորհրդի անդամների այցի առիթով: Նորին Սրբությունը ներկայացրեց Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական դաստիարակության եւ ընկերային ծառայության ոլորտներում, անդրադարձավ նաեւ հոգեւորականների պատրաստության խնդրին՝ զոհունակությամբ տեղեկացնելով, որ առաջիկայում կսկսի գործել երրորդ կրթական հոգեւոր հաստատությունը՝ Հառիճավանքի դպրանոցը:

Հանդիպմանը խոսվեց վանական կյանքի կարեւորության եւ դրա վերականգնման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին: Հյուրերին ներկայացվեց նաեւ այն հսկայածավալ աշխատանքը, որ իրականացվում է սրբավայրերի պահպանության, նոր եկեղեցիների կառուցման, Մայր Աթոռի բարեկարգման համար: Անդրադարձ կատարվեց Էստոնիայում հայկական եկեղեցու գործունեությանը, հայ համայնքին, ինչպես նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին Քույր Եկեղեցիների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԱՐՏՎԵՑ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 21-ին Խորհրդի անդամները Մայր Տաճարում ներկա գտնվեցին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով կատարվող Հանրապետական մաղթանքի արարողությանը, որ հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նույն օրը պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, այցելեց Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցի՝ մասնակցելու Սրբազան պատարագին:

Ապա Խորհրդի անդամները մեկնեցին Արագածոտնի թեմ, ուր այցելեցին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի եւ աղոթեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի առջեւ: Պատվիրակները հյուրընկալվեցին նաեւ առաջնորդարանին կից գործող դպրատանը, դիտեցին երիտասարդաց միության անդամների նկարները:

Պատվիրակությանը ներկայացվեց նաեւ թեմի հոգեւոր եւ շինարարական գործունեությունը եւ ապագայի հեռանկարները: Խորհրդի անդամներն առիթ ունեցան այցելելու Արագածոտնի թեմի պատմական վանքերն ու եկեղեցիները:

Սեպտեմբերի 22-ին Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությունն ավարտեց պաշտոնական իր այցը Հայաստան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ